նում են. ուստի հաւաքածս տեղեկութիւն-
ները, փաստերը, ուսումնասիրութիւնները
Ճորոխի Աւազանում ցանկացայ սոյն եր-
կով աւանդել ապագայ սերնդին: Քսան
տարի է տքնում էի քիչ ապահովել տնտեսա-
կանս, անձամբ այցելել նորից այդ վայ-
րերը, աւերակները լուսանկարել, չէնքերի
յատակագծները, հատուածականները գծա-
գրել ամբողջ Ճորոխի Աւազանում, վերստու-
գել տեղն ու տեղը եւ գրուածներս պատ-
կերներով ներկայացնել գիտական աշխարհի
քննութեան. բայց՝ 1914 թ. սկսուած մի-
ջազգային զարհուրելի աւերածը՝ ծրագիր-
ներս հիմքից խորտակեց եւ ես ստիպուած
եմ այս օր միայն հնարաւորը տալ, թողնե-
լով ապագային՝ յաջորդներին իրենց դա-
տողութեամբ շարունակելու ինչ որ օգտա-
ւէտ կը գտնին իրենց ժառանգների համար:

Առասպելական եւ խիստ վիպական է
Ճորոխի Աւազանը իր նախապատմական ա-
ւանդութիւններով, իր չինութիւններով եւ
իր բնակիչների անցեալով: Խորենացին
աւանդաբար մեզ պատմում է, թէ Ճորոխի
ափերում Պասքամի սերնդից դժնահայեաց
հսկայ Տորքը հրամանատար եւ վարիչ է
դառնում: «Կոպտանձն, տափակքիթ, խո-
րակն եւ ժահադէմ» այս վիթխարին իր
ծայրահեղ այլանդակութեան համար Անգ-
գեղ է կոչւում ժողովրդից, որի տիտանա-
կան ոյժի մասին տարածուած առասպել